

սահմանէ ութ օր հեռացումն եկեղեցիէն, եւ աշխարհականաց՝ հինգ օր եւ հարիւր ծունր: Իսկ գիտակցարար կերող քահանայն կարգալոյծ կ'ընէ, բայց այս պատիժը մարդասիրութեան համար երկամեայ ապաշխարութեան վերածելով. մին սրբապահութեամբ, եւ միւսը շաբաթապահութեամբ. պահքեր՝ որոց ակնարկեցինք կանխաւ (445): Իսկ աշխարհականին կը սահմանէ տարի մը շաբաթապահութիւն: Ու շան կրծածէն կամ լակածէն կերողը կ'ենթարկէ մկնապղծին ապաշխարութեան (ե):

Վերջապէս յանգէտս մեռելոտի կամ նապաստակ ուտող աշխարհականին կը կարգէ քառասնօրեայ պահք մը. եւ քահանային՝ երկու երեսնեակ եկեղեցիէն հեռացումն: Իսկ գիտակցարար կերողաց՝ միոյն երկու տարի, եւ միւսին հինգ՝ նոյն կերպով (Վե): Պատիժներ են ասոնք՝ որ կը հակասեն այս վարդապետին լայնարձակ տեսութեան՝ որուն ակնարկեցինք յառաջագոյն (453): Կ'երեւի թէ իւր ըզգացումն ու տիրող նանրահաւատութիւնք աւելի զօրաւոր էին քան միտքը: Ապարանեցւոյն օրով քահանայք տակաւին կը շարունակէին պատժել պղծեալները, Հաղորդութենէ զրկելով. ինչպէս՝ Պարսից